# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Առաքելյան Իռա**
*Տնտեսագիտական գիտությունների թեկնածու*
*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*
**Պողոսյան Ռիմա**
*Հոգեբանական գիտությունների թեկնածու*
*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Գլոբալիզացումը 20-րդ դարի վերջում դարձավ համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական միտումը: Բացելով նոր հնարավորություններ, գլոբալիզացումը միժամանակ թույլ չի տալիս երկրներին օգտագործել այդ հնարավորությունները հավասարապես: Ժամանակակից միգրացիոն գործընթացների բնույթն որոշվում է գլոբալացման տրամաբանությամբ, ինչը հանգեցրել է աշխարհի տարբեր մասերի փոխկախվածության աճին[1]: 20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը նշանավորվեցին միջազգային միգրացիայի զգալի աճով: Միգրանտները հազարներով տեղափոխվում են ինչպես հարևան երկրներ, այնպես էլ այլ մայրցամաքներ: Նրանց մեջ մեծ մաս են կազմում աշխատողները, մասնագետները, ուսանողները, ինչպես նաև փախստականները: Անցած դարի վերջի գործընթացներն ուղեկցվում էին մարդկանց «ստիպողական բնույթի» տեղաշարժերով: «Անհրաժեշտ» կամ «սթրեսային», ինչպես անվանում են, միգրացիային[2] բնորոշ են «դուրսմղող» գործոնների գերազանցումը «ներս ձգող» գործոնների համեմատ:

[1] Население и глобализация: 2-е изд. (Н.Римашевская, Ф.Галецкий, А..Овсянников и др.), М., Наука, 2004, с.288.
[2] **Arslan A., Effenberger A., Luecke M. and T. Mahmoud Omar** International Labor Migration and Remittances beyond the Crisis: Towards Development-Friendly Migration Policies. Kiel Policy Brief. N 10, 2009. Kiel Institute for the WorldEconomy, p. 5.

Հայաստանում ակտիվ միգրացիոն գործընթացները սկսվել են 1980-ականների վերջին: 1988 թվականի դեկտեմբերի աղետալի երկրաշարժը հանգեցրեց միգրացիայի ակտիվության աճին՝ մարդիկ աղետի շրջաններից տեղափոխվեցին Խորհրդային Միության խոշոր քաղաքներ: Այս գործընթացին գումարվեց միգրացիոն նոր հոսքը, որն առաջացավ Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի տարիներին (1991-1994 թթ.):

## Աշխատանքային միգրացիայի փուլերը

Հայաստանում հետխորհրդային շրջանը պայմանականորեն բաժանում են երեք փուլի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

**Առաջին փուլն** ընդգրկում է միգրացիայի շրջանը 1990-ականներից մինչև 2008թ. (համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկիզբը):

**Երկրորդ փուլը** սկսվում է 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից մինչև 2015թ.:

**Երրորդ փուլը** սկսվում է 2015 թվականին՝ Հայաստանի անդամակցությամբ Եվրասիական տնտեսական միությանը:

Առաջին փուլում (1990-2008 թթ.) միգրացիան կտրուկ աճեց՝ ավերիչ երկրաշարժի, Սովետական Միության փլուզման, Ղարաբաղյան պատերազմի, տնտեսության քայքայվածության և էներգետիկ ճգնաժամի հետևանքով առաջացած քաղաքական և տնտեսական ճգնաժամի արդյունքում: Հայաստանից միգրացիան, այդ թվում և աշխատքային միգրացիան, բազմաչափ երևույթ է և այն չի կարելի պարզեցնել ու հանգեցնել մի քանի գործոնների, քանի որ տնտեսականի հետ մեկտեղ կան նաև մշակութային, պատմական, քաղաքական, հոգեբանական և այլ գործոններ[3]:

Հայաստանից արտահոսքի կտրուկ աճը սկսվեց ԽՍՀՄ փլուզումից հետո, և միայն 1991-1995 թթ. մեր երկրից հեռացան 800-900 հազար մարդ: Արտագաղթի գագաթնակետը հասավ 1993-1994 թվականներին[4]: Միգրացիոն բարձր շարժունակություն ունեն աշխատու-

[3] **Poghosyan, G.** "Out – migration from Armenia" // Transboundary Migration in the Post-Soviet Space. Three Comparative Studies. Ed. By Nikolai Genov and Tessa Savvidis, Frankfurt am Main. Peter Lang, 2011, pp. 44-46.

[4] Programme of Human Development 1996, Yerevan. UNDP.1997, p.12.

նակ տարիքի անձինք, որոնց մեջ մեծ մասը կազմում են ակտիվ և բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդ մարդիկ: Միգրացիայի ալիքն ամենից շատ ազդել է տղամարդկանց վրա (66%): Տեղի է ունեցել այսպես կոչված միգրացիա «մասկուլինացիա» (маскулинизация): Ընտանեկան միգրացիայի նկատելի աճը սկսվել է 1993թ., ինչը վկայում էր, որ նախկին միգրացիոն կարճաժամկետ աշխատանքի տեղավորվելու նպատակաուղվածությունը փոխարինվել է երկարաժամկետ վերաբնակեցման հեռանկարով:

1991-1995թթ. միգրանտների ավելի քան երկու երրորդը (67%) մեկնում էր Ռուսաստանի Դաշնություն, 9%-ը՝ այլ հետխորհրդային հանրապետություններ, 14%-ը՝ հեռավոր արտերկրներ, և 10%-ը՝ չճշտված ուղղությունով[5]: Հետազոտողների կարծիքով հանրապետությունից հեռացածների մեջ գիտնականները, ուսուցիչները, ինժեներները և մասնագետները կազմում էին մոտ 30%[6]:

Բավականին մտահոգիչ էր աշխատանքային միգրանտների՝ կանանց շրջանում ստեղծված իրավիճակը: Ժամանակակից դարաշրջանն իր անլուծելի սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներով հատկապես սուր ազդեցություն է գործել կանանց վրա: Բացասական հետևանքները՝ սոցիալ-տնտեսական համակարգի կտրուկ փոփոխությունը, ձեռնարկությունների զանգվածային փակումը, ինչն առաջացրել էր երկրում գործազրկություն և աղքատություն, աճող միգրացիա և ուժեղացող ֆինանսատնտեսական ճգնաժամը, կանանց դրել էին կենսական ծանր պայմաններում: Բնակչության միգրացիոն շարժի մեջ ի հայտ էր եկել թրաֆիքինգի սկզբունքորեն նոր, ծայրահեղ սուր խնդիր[7]: 1990-ականներից ի վեր միգրացիոն հոսքերի **ֆեմինիզացիան** ճանաչվել է որպես միջազգային աշխատանքային միգրացիայի զարգացման վերջին փուլին բնորոշ հատկանիշ, թեև ավանդաբար համարվում էր, որ աշխատանքային միգրանտների ճնշող մեծամասնությունը տղամարդիկ են:

Թրաֆիքինգի զոհ դարձած աշխատանքային կին միգրանտների համատեղ դիմանկարն ունի հետևյալ տեսքը. 18-55 տարեկան (դրանց թվում ամենամեծ մասը բաժին է ընկնում 26-35 տարեկան (24,4%) և

---

[5] Programme of Human Development 1996, Yerevan. UNDP, 1997, p.13.

[6] **Г.А.Погосян.** “Общество в эпоху перемен: надежды и реалии”, Вестник Российской Академии Наук, 2012, том 82, N5, с.446.

[7] Нелегальные перемещения женщин и детей из РА, IOM, Ереван, 2001, с. 9.

36-45 տարեկան տարիքային խմբերին (33,5%), առավել կրթվածները (46,8% ունեն բարձրագույն կրթություն, 38,7%՝ անավարտ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն): Միգրանտների ընտանեկան կացության տվյալները ցույց են տալիս, որ բարձր միգրացիոն տեղաշարժ ունեն ամուսնացած (52.6%), այնուհետև միայնակ կանայք (20.6%) և ամուսնալուծվածները կամ այրիները (26.7%)[8]:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով սկսված **2-րդ փուլում** (2008-2015թթ.) ոչ միայն շատ երկրների տնտեսությունների կտրուկ անկում է նկատվել, այլև լրջորեն փոխվել են միգրացիոն հոսքերն ամբողջ աշխարհում: Աշխատանքային միգրացիան, այս առումով, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից ամենաշատ տուժած ոլորտներից էր:

Հայաստանը, փաստորեն, մշտական ճգնաժամի մեջ էր՝ նույնիսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկսվելուց առաջ[9]: Տնտեսական ճգնաժամի հիմնական հետևանքներից մեկը գործազրկության աճն էր: Աշխատանքի համաշխարհային կազմակերպության գնահատումով Հայաստանում գործազրկությունը 2003-2007թթ. կազմել է 29-32%, իսկ 2008-2013 թթ. – 16-19%[10]: Հայաստանում շարունակաբար արկա են լուրջ գործոններ, որոնք երկրից դուրս են մղում «ավելցուկային» բնակչությունը դեպի արտագաղթ կամ աշխատանքային միգրացիա»[11]:

Աշխարհի 200 միլիոն միգրանտները կազմում են համաշխարհային բնակչության ընդամենը 3%-ը: Հայաստանում միգրացիայի մակարդակը հասել է բնակչության ավելի քան 30%-ին, այսինքն՝ 10 անգամ ավելիին[12]: Ստացվում է, որ երկրի տնտեսությունը կառուցված է ոչ թե «երկրում արտադրված ապրանքների արտահանման վրա, այլ

---

[8] Проблемы нерегулярной миграции женщин в Армении. Ереван, 2000.

[9] **Затикян А.,** Экономические факторы достижения гендерного равенства в Армении в условиях финансово-экономического кризиса. //Перспективы достижения гендерного равенства в Армении: политические и правовые аспекты. Ереван, 2010, с.188.

[10] Союзинфо, https://soyuzinfo.am/rus/analitics/detail.php?%20ELEMENT_ID=1101

[11] Союзинфо, https://soyuzinfo.am/rus/analitics/detail.php?ELEMENT_ID=1101

[12] **Погосян Г.А.,** "Общество в эпоху перемен: надежды и реалии", Вестник Российской Академии Наук, 2012,том 82, N5, с.445.

մարդկային կապիտալի կամ աշխատուժի, որոնցից ստացված շահութն անհատ տրանսֆերտների տեսքով վերադառնում են երկիր»[13] :

2007 թվականին ԵԱՀԿ-ի կատարած ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանից աշխատանքային միգրանտների 93%-ը մեկնել է Ռուսաստան[14]: Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն, Ռուսաստանը դարձել է ԱՊՀ երկրներից աշխատանքային միգրանտների գլխավոր հիմնական մագնիսը[15]: Չնայած ճգնաժամին և COVID-19 կորոնավիրուսային համաճարակին, Հայաստանից Ռուսաստան աշխատանքային միգրացիան չի դադարել:

«Հաշվի առնելով, որ գիտելիքը գործնականում միակ լուրջ ռեսուրսն է, որը դեռ ունի Հայաստանը, դրա կորուստը ոչ միայն տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային առումով անարդյունավետ է, այլ նաև սպառնալիք է ազգային անվտանգության, տնտեսական զարգացման, ինչպես հետևանք Հայաստանի սոցիալական և քաղաքական կայունության համար, ինչպես նաև երկրի մրցունակության մակարդակի նվազեցնման առումով[16]: Այս մարդկանց հեռանալն երկրից հիմնականում ձևավորում է «ուղեղների արտահոսքը»:

Միգրացիոն հոսքերն ազդում են երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա: Տեղի է ունենում տարիքա-սեռային կառուցվածքի դեֆորմացիա՝ պայմանավորված «ամենաառողջ, երիտասարդ և մասնագիտորեն պատրաստված քաղաքացիների հեռանալով»[17] : Չնայած ակնհայտ բացասական կողմերին, որակյալ մասնագետների արտահոսքը մտնում է ինտելեկտուալ աշխատաշուկայի գլոբալացման օբյեկտիվ գործընթացի մեջ, որին այս կամ այն ձևով բախվում է աշխարհի

---

[13] **Затикян А.** Экономические факторы достижения гендерного равенства в Армении в условиях финансово-экономического кризиса.//Перспективы достижения гендерного равенства в Армении: политические и правовыеаспекты. Ереван, 2010, с.189-195.

[14] **Minasyan A., Poghosyan A., Hakobyan T. and Hancilova B.** Labor Migration from Armenia in 2005-2007. A Survey. Yerevan, «Asoghik», 2007, p. 32.

[15] Migration and Remittances. Eastern Europe and the Former Soviet Union. (Edited by Ali Mansoor and Bryce Quillin). Washington: World Bank, 2007, p. 28.

[16] **Осипов В.Г.** «Интеллектуальная миграция: глобальный опыт и реалии Армении» //Հասարակական միտքը արդի ժամանակաշրջանում. Երևան, 2012, էջ 127-143.

[17] **Погосян Г.А.** “Миграционные потоки в Армении”. Миграционные мосты в Евразии. Сборник материалов VI международной научно-практической конференции “Роль миграции в социально-экономическом идемографическом развитии посылающих и принимающих стран Евразии: регионы Восточной Европы и Центральной Азии”. Москва, Ереван, 2014, с.364.

երկրների մեծ մասը: Ուստի պետք է նախ և առաջ մտածել ոչ թե այն մասին, թե ինչպես կանգնեցնել այս գործընթացը, այլ աշխատել դրանից առավելագույն օգուտ քաղել:

Միգրացիայի **երրորդ փուլը** սկսվել է 2015 թվականին Հայաստանի անդամակցությամբ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ): Հայաստանում սկսեցին իրականացվել ինտեգրացիոն նախագծեր՝ ուղղված եվրասիական տարածաշրջանի պետությունների միջև համագործակցության զարգացմանն ու խորացմանը: Միասնական տնտեսական միջավայրի կառուցումը մարդկանց պետական սահմանով ֆիզիկական տեղաշարժից բացի, ենթադրում է նաև աշխատուժի ազատ տեղաշարժ: Ինտեգրման գործընթացում, հետևելով ապրանքային և ֆինանսական շուկաներին, աստիճանաբար զարգացավ նաև աշխատաշուկան: Իհարկե, երկրից հազարավոր գաղթողների առկայությունը կարևոր դեր է խաղացել Հայաստանի ԵԱՏՄ Մաքսային միությանը անդամակցելու որոշման մեջ: Այս քայլը անշուշտ բարելավելու էր հայ աշխատանքային միգրանտների վիճակը Ռուսաստանի Դաշնությունում: Հայաստանի անդամակցումը Եվրասիական միությանը մեծացրեց օրինական միգրանտների հոսքը դեպի Ռուսաստան:

**Եզրակացություններ և առաջարկներ**

Տնտեսական և աշխատանքային շահերը պահպանելու, ինչպես նաև աշխատուժի արտագաղթը Հայաստանից կանխելու համար անհրաժեշտ է ստեղծել միության տարածքում աշխատանքային միգրանտների հոսքերը վերահսկող միասնական մեխանիզմ: Աշխատուժի ներհոսքի և արտահոսքի հստակ կարգավորման բացակայությունը հանգեցրել է միջազգային աշխատաշուկայում մեր հանրապետության ինտեգրման ինքնաբուխ երևույթին, ինչը կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Դա բացասաբար է անդրադառնում նաև մարդկային ռեսուրսների առկայության վրա, որոնք ռազմավարական նշանակություն ունեն տնտեսության և երկրի պաշտպանության ու անվտանգության համար: Այսպիսով, միգրացիան մի կողմից մարտահրավեր է երկրի ժողովրդագրական հիմնախնդիրների համար, իսկ մյուս կողմից՝ սոցիալական և տնտեսական պրոբլեմները լուծող կարևոր գործոն է: Հենց այս գործոնները հաշվի առնելով՝ պետք է կառուցել «ճիշտ» միգրացիոն քաղաքականություն: Անհրաժեշտ է մշակել

հավասարակշռված և երկարաժամկետ միգրացիոն քաղաքականություն՝ հիմնված ազգային անվտանգության հայեցակարգի վրա:


## ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանում միգրացիոն գործընթացներն ունեն երկար պատմություն և խորը սոցիալ-տնտեսական արմատներ: Սակայն աշխատունակ հայ բնակչության լայնածավալ արտահոսքն, որը սկսվել է Խորհրդային Միության փլուզումից հետո և շարունակվում է առ այսօր, ունի իր սոցիալական, տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները, ժողովրդագրական կառուցվածքն ու պատմական փուլերը: Հոդվածում ամփոփված են հեղինակների երկարամյա դիտարկումները և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները, հետխորհրդային միգրացիայի առանձնահատկությունները՝ գլոբալ գործընթացների և տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերի զարգացման համատեքստում: Վերլուծված է միգրացիոն գործընթացների դինամիկան, Հայաստանից աշխատանքային միգրացիոն հոսքերի կառուցվածքն ու ուղղությունը վերջին երեք տասնամյակների ընթացքում:



**Բանալի բառեր**. աշխատանքային միգրացիա, կառուցվածք, փուլեր, պատճառներ, դինամիկա:


## ПРОБЛЕМЫ ДИНАМИКИ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В АРМЕНИИ


**Аракелян Ира**
*Кандидат экономических наук,*
*старший научный сотрудник Института*
*философии, социологии и права НАН РА*
**Погосян Рима**
*Кандидат психологических наук, доцент,*
*старший научный сотрудник Института*
*философии, социологии и права НАН РА*



## РЕЗЮМЕ

Миграционные процессы в Армении имеют давнюю историю и глубокие социально-экономические корни. Однако, масштабный отток

трудоспособного армянского населения, начавшийся после распада Советского Союза и продолжающийся в наши дни, имеет свои социальные, экономические и политические особенности, демографическую структуру и исторические этапы. В статье подводятся итоги многолетних наблюдений и социологических исследований авторов по изучению характеристик и особенностей постсоветской миграции в условиях развития глобальных процессов и региональных интеграционных проектов. Анализируется динамика миграционных процессов, структура и направленность потоков трудовой миграции из Армении за последние три десятилетия.

**Ключевые слова:** трудоваямиграция, структура, периоды, причины, динамика.

## THE PROBLEMS OF DYNAMIC OF LABOR MIGRATION IN ARMENIA

**Arakelyan Ira**
*Candidate of Economy Sciences,*
*Senior Researcher of the Institute of Philosophy,*
*Sociology and Law of NAS RA*
**Poghosyan Rima**
*Candidate of Psychological Sciences, Associate Professor,*
*Senior Researcher of the Institute of Philosophy,*
*Sociology and Law of NAS RA*

### SUMMARY

The migration processes in Armenia have a long history and the deep socio-economic roots. However, the large-scale outflow of the labor forces from Armenia, which started after the collapse of the Soviet Union and continues today, has its social, economic and political characteristics, own demographic structure and the historical stages. This article sums up the results of author's many years observations and sociological studies of the characteristics and features of post-soviet migration in the context of global developments and regional integration processes. The dynamics of migration processes, the structure and direction of labor migration flows from Armenia over the past three decades are analyzed.

**Key words**: labor migration, structure, periods, causes, dynamics.